Հրատարակվել է Ճապոնիայի արտաքին գործերի նախարարության կողմից
Կասումիգասեկի 2-2-1, Չիյոդա-կու, Տոկիո 100-8919, Ճապոնիա

http://www.mofa.go.jp/
(Արտաքին գործերի նախարարության վեբկայք)

http://www.web-japan.org/
(Web Japan : Ճապոնիայի մասին ներածական տեղեկություններ տրամադրող վեբկայք)

ՀԱԼՈ՝ ՃԱՊՈՆ

ԲԱՐԵՎ ՃԱՊՈՆԻԱ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

էջ 02 Կայսերական ընտանիք, ազգային դրոշ և ազգային օրհներգ

էջ 03 Բնություն և աշխարհագրություն

էջ 05 Քաղաքային կյանք

էջ 07 Բնակարան, սնունդ և հագուստ

էջ 09 Դպրոց

էջ 11 Լեզու

էջ 13 Սեզոնային իրադարձություններ

էջ 15 Մշակույթ

էջ 17 Սպորտ

էջ 19 Պատմություն

էջ 21 Կառավարություն և միջազգային հարաբերություններ

էջ 23 Տնտեսություն, արդյունաբերություն և տեխնոլոգիա

էջ 25 Շրջակա միջավայրի պահպանություն

Կայսերական ընտանիք, ազգային դրոշ և օրհներգ

Ճապոնիայի սահմանադրության համաձայն՝ Կայսրը պետության և ժողովրդի միասնության խորհրդանիշն է: Ճապոնիայի ազգային դրոշը կոչվում է *Հինոմարու*, իսկ ազգային օրհներգը՝ *Կիմիգայո:*

Կայսերական ընտանիք

Կայսր Ակիհիտոն, որպես Ճապոնիայի 125-րդ կայսր, գահ է բարձրացել 1989թ.: Կայսերական ընտանիքի անդամները քաղաքացիների հետ լայն կապեր են պահպանում Ճապոնիայով մեկ, այդ թվում՝ աղետի գոտիներում, և խթանում միջազգային բարեկամությունը: Նրանք նաև ակտիվ գիտական գործունեություն են ծավալում և պահպանում երկրի մշակութային ավանդույթները:

Ազգային դրոշ

Ճապոնական դրոշի կարմիր շրջանը խորհրդանշում է արևը, և դրոշը կոչվում է Հինոմարու, ինչը նշանակում է «Արևի շրջան»:



Ազգային օրհներգ

Ճապոնիայի ազգային օրհներգի երաժշտությունը գրվել է 19-րդ դարի վերջին, սակայն խոսքերը վերցված են *վակայից* (պոեմի հնագույն տեսակ): Այն մաղթում է, որ երկիրը շարունակի բարգավաճել այնքան երկար դարեր, մինչև մանր լեռնային բյուրեղները վերածվեն մամռակալած ապառաժների:

Բնություն և աշխարհագրություն

Ճապոնիան կազմված է հյուսիսից հարավ ձգվող կղզիների երկար շղթայից: Հետևաբար, այն ընդգրկում է շատ կլիմաներ՝ հյուսիսում մերձարկտիկականից մինչև հարավում բարեխառն և մերձարևադարձային: Բնապատկերը հաճախ է փոխվում չորս եղանակներից յուրաքանչյուրում:





Շիհանո գետ

Ճապոնիայի ամենաերկար գետը (367 կմ)
Ճապոնիայի գետերի մեծ մասն արագահոս է, և օգտագործվում է հիդրոէլեկտրաէներգիա արտադրելու, ինչպես նաև տրասնպորտի համար: Շիհանո գետն անցնում է տպավորիչ գյուղական վայրերի միջով և սիրված հանգստի գոտի է թիավարության և ձկնորսության սիրահարների համար:



Բիվա լիճ

Ճապոնիայի ամենամեծ լիճը (670 կմ²)
Ճապոնիան ունի բազմաթիվ լճեր՝ բոլոր ձևերի և չափերի: Խոշորագույնը լինելուց բացի՝ Բիվա լիճն ունի ամենագեղեցիկ բնապատկերներից մեկը և հիանալի վայր է թիավարության և ջեթ սքիինգի համար:



Կուշիրո խոնավ հողերը

Ճապոնիայի խոշորագույն խոնավ հողերը (18,300 հա)
Ճապոնիայի խոնավ հողերում կան բազմաթիվ հազվագյուտ և պահպանվող բույսերի և կենդանիների տեսակներ: Կուշիրոն հայտնի է իր ջինջ գետերով, որոնք դուք կարող եք ուսումնասիրել նավակով:

Ֆուջի լեռ

Ճապոնիայի ամենաբարձր լեռը (3,776 մ)
Ճապոնիան ունի շատ հրաբուխներ: Ֆուջի լեռն էլ ակտիվ հրաբուխ է, որը վերջին անգամ ժայթքել է 300 տարի առաջ: Շատերն են բարձրանում նրա կատարյալ գագաթը՝ տեսնելու Նոր տարվա առաջին արևածագը:

Տարածություն՝ շուրջ 378,000 կմ²
Բնակչություն՝ շուրջ 128 միլիոն
Երկարություն (հյուսիս-հարավ)՝ շուրջ 3,000 կմ
Երկարություն (արևելք-արևմուտք)՝ շուրջ 3,000 կմ
Ընդհանուր առափնյա գիծ՝ շուրջ 34,000 կմ
Ճապոնիայի գրեթե 3 / 4 լեռներ են: Մարդկանց մեծ մասը բնակվում է լեռնային ավազանների կամ գետաբերանների շուրջ ձևավորված հարթավայրերում , իսկ քաղաքները գերբնակեցված են: Ջերմաստիճանային փոփոխությունները մեղմ են և աստիճանական , ամառը սկսվում է վեցշաբաթյա անձրևային շրջանով, իսկ շատ վայրերում ձմռանը ձյուն է տեղում:

Քաղաքային կյանքը

Ճապոնիայում կան բազմաթիվ մեծ քաղաքներ, և դրանցից տասներկուսը ունեն ավելի քան մեկ միլիոն բնակչություն: Քաղաքում ապրելը շատ հարմար է, քանի որ կան ավտոբուսներ և գնացքներ, ինչպես նաև շատ խանութներ և հետաքրքիր վայրեր:



Ճապոնիայի ժամանակակից քաղաքները հսկայական աճ են գրանցել Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո տնտեսական մեծ թռիչքի շրջանում՝ շրջակա արվարձաններում քաղաք աշխատելու եկած մարդկանց աճող քանակը տեղավորելու: Մարդկանց հոսքը գյուղից քաղաք շարունակվում է, սակայն այժմ առկա է հակառակ միտումը. ավտոմեքենա ունենալու շնորհիվ շատ թոշակառուներ տեղափոխվում են գյուղ:

Երկնաքերներ

Տոկիոյի նման հսկայական բնակչություն ունեցող քաղաքներում դուք կտեսնեք բազմաթիվ երկնաքերներ: Դրանք հաճախ պարունակում են գրասենյակներ, հանրախանութներ, հյուրանոցներ և երբեմն նաև բնակարաններ:

Իմ քաղաքը

Մենք ունենք մեծ կայարան, ինչպես նաև մետրո և ավտոբուսներ: Այն շատ հարմար վայր է ապրելու համար, քանի որ կայարանին մոտ գտնվող խանութներն ունեն այն ամենը, ինչ մեզ անհրաժեշտ է: Ես կարող եմ քայլել ամեն տեղ՝ բացի այն տեղերից, ուր գնում ենք ընտանեկան ավտոմեքենայով:

Հիվանդանոց

Գործարան

Փոստի բաժանմունք

Կայարանի շուրջ

Կայարանների մեծ մասի մոտ դուք կգտնեք շենքեր՝ լցված խանութներով, ռեստորաններով և այնպիսի ժամանցի վայրերով, ինչպիսիք են կինոթատրոնները:

Կայարան

Պիկ ժամ

Մեծ քաղաքներն ունեն բազում երկաթուղային գծեր, իսկ գնացքները խիստ մարդաշատ են առավոտյան պիկ ժամին, երբ բոլորը գնում են աշխատանքի կամ դպրոց:

Կենցաղային ապրանքների խանութներ

Այս խանութները բաց են ամեն օր 24 ժամ՝ վաճառելով սննդամթերք և առօրյա կյանքի համար անհրաժեշտ ամեն ինչ: Դուք նույնսիկ կարող եք այստեղ վճարել ձեր վարձերը կամ օգտագործել բանկոմատը ձեր բանկային հաշվից գումար կանխիկացնելու նպատակով:

Բնակարանային նախագիծ



Ամրոց

Ընտանեկան տուն

Տակուհայբին

Տակուհայբին է կոչվում Ճապոնիայի՝ դռնից դուռ առաքման համազգային եզակի համակարգը: Կան մի քանի առաքող ընկերություններ, որոնք փոխադրում են գրեթե ամեն բան և սովորաբար առաքում մինչև հաջորդ օրը:

Կոբան

Կոբանը ճապոնական հատուկ փոքրիկ ոստիկանական բաժանմունք է: Եթե երբևիցե կորեք քաղաքում, մոտակայքում սովորաբար կգտնեք կոբան, որտեղ կարող եք պարզել ուղղությունները:



Այգի

Բնակելի շենք

Հրշեջ կայան

Ընտանեկան ռեստորան

Դպրոցներ

Քաղաքներում երեխաների մեծ մասը կարող է քայլել դեպի մոտակա տարրական դպրոցը: Դպրոցները ծառայում են նաև իբրև տարհանման կենտրոններ բնական աղետի (օրինակ՝ երկրաշարժ) դեպքում:

Բնակարան, սնունդ և հագուստ

Ճապոնիայում այսօրվա մեր ապրելակերպը ճապոնական ավանդական սովորույթների և ժամանակակից արևմտյան եղանակների զուգակցում է: Դուք սա կարող եք տեսնել մեր սննդից, բնակարանից և հագուստից:



Մտնելուց առաջ հանեք ձեր կոշիկները

Ուսում

Ճապոնական տուն

Ճապոնական ավանդական տանը դուք նստում եք հատակին փռված տատամիի վրա: Միևնույն սենյակը կարող է վերածվել ճաշասենյակի՝ սեղան գցելով, կամ ննջասենյակի՝ ֆուտոն վերմակները փռելով: Ժամանակակից տները հաճախ ունենում են տատամի և արևմտյան ոճով սենյակներ, բայց բոլորը, այնուամենայնիվ, հանում են իրենց կոշիկները դռան մոտ:

Կիմոնո

Հին ժամանակներում ճապոնացիներն ամբողջ ընթացքում կիմոնոներ էին կրում: Այսօր մենք որպես կանոն հագնում ենք արևմտյան հագուստ, իսկ կիմոնոները պահում ենք հատուկ առիթների և փառատոնների համար: Մենք կիմոնո հագնում ենք նաև ճապոնական ավանդական մշակութային միջոցառումներին՝ ճապոնական պար, ծաղկահարդարում և թեյախմության արարողություն, մասնակցելու համար:

Ճապոնական սնունդ

Տիպիկ ընտանեկան ճաշը (ներքևի աջ նկարում) բաղկացած է երեք մասից. մի բաժակ բրինձ, միսո ապուր և որոշ ուղեկցող ճաշատեսակներ: Սուշին (վերևի նկարում) և տեմպուրան (ներքևի ձախ) սիրված են բոլոր տարիքային խմբերի կողմից: Մենք հաճախ ենք ուտում *օնիգիրի* բրնձի գնդակներն (աջ կողմում պատկերված) իբրև նախուտեստ:

Բաժակից ուտելու համար մենք օգտագործում ենք փայտիկներ

YUTA

Դպրոց

Ես հաճախում եմ տարրական դպրոց: Ճապոնիայում մենք դպրոց սկսում ենք գնալ վեց տարեկանից, և տարրական դպրոցը տևում է վեց տարի: Դասերից բացի՝ մենք սովորում ենք նաև շատ այլ բաներ:

Դպրոցական ճաշեր

Դպրոցում տրվում է ճաշ, և բոլորն ուտում են միասին: Ճաշացանկն ամեն օր տարբեր է, բայց միշտ հավասարակշռված և առողջարար: Աշակերտները հերթով մատուցում և հավաքում են սեղանը:

Սպորտի օր

Ամեն տարի սպորտի օրը ծնողները գալիս են դպրոց՝ դիտելու և քաջալերելու իրենց երեխաներին: Դա միայն սպորտի օր չէ. աշակերտները նաև ներկայացնում են պիեսներ և պարեր, որոնք հենց իրենք են ստեղծել:

Այցելություն գործարաններ

Մոտակա գործարաններ և նմանատիպ վայրեր այցելությունները աշակերտներին ցույց են տալիս, թե ինչպես է աշխատում հասարակությունը: Միշտ հետաքրքիր է տեսնել՝ իրականում ինչպես են պատրաստվում կոնֆետները և ավտոմեքենաները: Նրանք տեսնում են բաներ, որոնք հնարավոր չէ սովորել դասի ժամանակ:

Դաշտային էքսկուրսիաներ

Աշնանը և գարնանը, երբ եղանակը մեղմ է, տարրական դպրոցի աշակերտները այցելում են հանրահայտ բնական և պատմական կոթողները: Բոլորը իրենց հետ տանում են տանը պատրաստած *օբենտո*՝ փաթեթավորված ճաշ:

Ըստ օրենքի՝ ինչնամյա կրթությունը պարտադիր է. վեց տարի տարրական դպրոցում և երեք տարի՝ կրտսեր ավագում: Դրանից հետո աշակերտները պետք է հանձնեն ավագ դպրոցի և համալսարանի ընդունելության քննություններ:. Այժմ աշակերտների մոտ կեսն ընդունվում է համալսարան:

Դասեր

Յուրաքանչյուր դասարան ունի 30-40 աշակերտ: Բացի ճապոներենից, մաթեմատիկայից, հասարակական և բնական գիտություններից՝ դասավանդվում են երաժշտություն, արվեստներ և արհեստներ, ֆիզկուլտուրա, անգլերեն և տնային տնտեսություն: Տնային աշխատանքն ու կանոնավոր թեստերը միտված են աշակերտների ունակությունների բարելավմանը:



Տարրական և կրտսեր ավագ դպրոցներում ուսումնական տարին սկսվում է ապրիլին և ավարտվում հաջորդ տարվա մարտին: Դպրոցական արձակուրդները երեքն են՝ ամառային, ձմեռային և գարնանային: Բացման արարողությունները տեղի են ունենում ապրիլին, իսկ ավարտականը՝ մարտին:

YUTA

Լեզու

Ճապոներեն գրելու համար օգտագործվում են երեք համակարգեր՝ *կանջի*, *հիրագանա* և *կատականա*: *Կանջին* ներմուծվել է Չինաստանից 5-րդ դարում, և ճապոնացիները հետագայում օգտագործել են դրա պատկերագրերի մի մասը *հիրագանան* և *կատականան* մշակելու համար:



Կանջի

Առաջին հնագույն *կանջին* եղել են փոքր պատկերներ, որոնք ցույց են տվել ամեն բառի նշանակությունը, բայց այսօր *կանջիի* մեծ մասն այդպես չէ: Ժամանակակից ճապոներենում դուք կարող եք կարդալ գրեթե ամեն ինչ, եթե սովորեք շուրջ 2000 *կանջի* պատկերագրեր:



や ま = հիրագանա
ヤ マ = կատականա
YAMA = յամա

Հիրագանա և կատականա գրերի աղյուսակ

Խոսակցական ճապոներենի հնչյունները կարող են գրվել 46 նիշերով՝ գումարած որոշ նշաններ, որոնք թեթևակի փոխում են արտասանությունը (օրինակ՝ կա-ից գա): *Հիրագանայի* և *կատականայի* յուրաքանչյուր նիշ համապատասխանում է հնչյունի՝ որպես կանոն բաղաձայնի և ձայնավորի համակցություն:

あ	か	さ	た	な	は	ま	や	ら	わ			が	ざ	だ	ば	ぱ
ア	カ	サ	タ	ナ	ハ	マ	ヤ	ラ	ワ			ガ	ザ	ダ	バ	パ
a	ka	sa	ta	na	ha	ma	ya	ra	wa			ga	za	da	ba	pa
い	き	し	ち	に	ひ	み		り				ぎ	じ	ぢ	び	ぴ
イ	キ	シ	チ	ニ	ヒ	ミ		リ				ギ	ジ	ヂ	ビ	ピ
i	ki	shi	chi	ni	hi	mi		ri				gi	ji	ji	bi	pi
う	く	す	つ	ぬ	ふ	む	ゆ	る				ぐ	ず	づ	ぶ	ぷ
ウ	ク	ス	ツ	ヌ	フ	ム	ユ	ル				グ	ズ	ヅ	ブ	プ
u	ku	su	tsu	nu	fu	mu	yu	ru				gu	zu	zu	bu	pu
え	け	せ	て	ね	へ	め		れ				げ	ぜ	で	べ	ぺ
エ	ケ	セ	テ	ネ	ヘ	メ		レ				ゲ	ゼ	デ	ベ	ペ
e	ke	se	te	ne	he	me		re				ge	ze	de	be	pe
お	こ	そ	と	の	ほ	も	よ	ろ	を	ん		ご	ぞ	ど	ぼ	ぽ
オ	コ	ソ	ト	ノ	ホ	モ	ヨ	ロ	ヲ	ン		ゴ	ゾ	ド	ボ	ポ
o	ko	so	to	no	ho	mo	yo	ro	wo	n		go	zo	do	bo	po

きゃ	しゃ	ちゃ	にゃ	ひゃ	みゃ	りゃ	ぎゃ	じゃ	びゃ	ぴゃ
キャ	シャ	チャ	ニャ	ヒャ	ミャ	リャ	ギャ	ジャ	ビャ	ピャ
kya	sha	cha	nya	hya	mya	rya	gya	ja	bya	pya
きゅ	しゅ	ちゅ	にゅ	ひゅ	みゅ	りゅ	ぎゅ	じゅ	びゅ	ぴゅ
キュ	シュ	チュ	ニュ	ヒュ	ミュ	リュ	ギュ	ジュ	ビュ	ピュ
kyu	shu	chu	nyu	hyu	myu	ryu	gyu	ju	byu	pyu
きょ	しょ	ちょ	にょ	ひょ	みょ	りょ	ぎょ	じょ	びょ	ぴょ
キョ	ショ	チョ	ニョ	ヒョ	ミョ	リョ	ギョ	ジョ	ビョ	ピョ
kyo	sho	cho	nyo	hyo	myo	ryo	gyo	jo	byo	pyo

あ = հիրագանա
ア = կատականա
a = ա



東京（とうきょう/ՏՈԿԻՈ）

Կայարանների անվանումները գրվում են *կանջիով*, *հիրագանայով* և անգլերեն՝ բոլորին հասկանալի լինելու համար:

Օտար տեղանուններ և անձնանուններ

Կատականան օգտագործվում է այլ լեզուներից ճապոներեն ներմուծված բառերը, ինչպես նաև օտար անձնանունները և տեղանունները գրելու համար:

タージ・マハル
Թաջ Մահալ

ニューヨーク
Նյու Յորք

シェークスピア
Շեքսպիր

クレオパトラ
Կլեոպատրա

チョコレート
Շոկոլադ

パスタ
Պաստա

Սակուռա

Սակուռա նշանակում է ծաղկած բալենի՝ ճապոնացիների ամենասիրելի ծաղիկը: *Կանջիով* մենք սակուռա գրում ենք「桜」, *հիրագանայով*՝「さくら」և *կատականայով*՝「サクラ」: Ճապոներենը կարող է գրվել ձախից աջ կամ վերից վար:





Սեզոնային իրադարձություններ

Ճապոնիան ունի չորս վառ արտահայտված եղանակներ և դրանցից յուրաքանչյուրը տոնելու շատ սովորույթներ ու ավանդույթներ: Ամբողջ ընտանիքը մասնակցում է տոներին և հիանալի ժամանակ անցկացնում:

Տանաբատա (Աստղերի փառատոն)

Հուլիսի 7-ին մարդիկ իրենց սրտերի ցանկությունները գրում են գունավոր թղթի երկար ժապավենների վրա և կախում հնդկեղեգի ձողերից, որոնք զարդարում են փողոցները այս փառատոնի ժամանակ: Որոշ շրջաններ Տանաբատան տոնում են մեկ ամիս ուշ՝ օգոստոսին:

Հրավառություն

Ճապոնիան հայտնի է ամառվա կեսին հսկայական հրավառություններով՝ հիմնականում մեծ գետերի կամ ծովի ափերին: Առավել մեծ միջոցառումները շարունակվում են ավելի քան մեկ ժամ՝ գիշերային երկինքը լուսավորելով 5,000 և ավելի գույնզգույն հսկա պայթյուններով:

Երեխաների օր

Մայիսի 5-ին ընտանիքներն իրենց պարտեզներում թռցնում են մի շարք *կոինոբորիներ*՝ կտորից պատրաստված մեծ ձկներ: Դրանք խորհրդանշում են ծածանը, որն ուժեղ ձուկ է և հոսանքին հակառակ սլանում է վեր, իսկ նավադրոշները խորհրդանշում են ուժեղ և առողջ երեխաներին:

Հինամացուրի (Տիկնիկների փառատոն)

Մարտի 3-ի այս փառատոնն անցկացվում է երիտասարդ աղջիկների առողջության համար աղոթելու նպատակով: Ընտանիքները կազմակերպում են հնագույն պալատական ազնվականների հիասքանչ խալաթներ հագած տիկնիկների ցուցադրություն:





Սեցուբուն (Լոբի նետելու արարողություն)

Սա հին տոն է, որն անց է կացվում փետրվարի 3-ին՝ գարնան սկզբին չար ոգիներին քշելու համար: Ընտանիքի անդամներից մեկը կրում է կարմիր դիմակ, ինչը խորհրդանշում է դևին կամ *օնիին*, իսկ մյուսները լոբի են նետում նրա վրա այնքան ժամանակ, մինչև նա փախչի տանից:

Ցուկիմի (Լուսնի դիտում)

Լիալուսինն ամենից գեղեցիկ է աշնանը, և մարդիկ հավաքույթներ են կազմակերպում տեսարանն ըմբոշխնելու համար: Դիտակետերը զարդարում են երկար պամպասների խոտով, և բոլորին դուր է գալիս ուտել բրնձի խմորագնդիկներ (կլոր և սպիտակ, ինչպես լիալուսինը):

Շյոգացու (Նոր տարի)

Ընկերությունների և խանութների մեծ մասը ամանորյա դադար է վերցնում մինչև հունվարի 3-ը: Ճապոնական ընտանիքներում տարվա մեկնարկը տոնում են հատուկ կերակուրներով և ավանդույթներով՝ աղոթելու առողջության և երջանկության համար:

Աշնանային փառատոններ

Աշնանը բերքահավաք է, և Ճապոնիայով մեկ անցկացվում են գոհունակության փառատոններ այդ տարվա բերքի համար: Յուրաքանչյուր համայնքից մարդիկ ցուցադրում են տեղի աստվածներին իրենց թաղամասում՝ նրանց տանելով *միկոշի* շարժական տաճարներում:

Մշակույթ

Ճապոնական մշակույթը շատ առումներով ինքնատիպ է. ավանդական մշակույթ, ինչպես օրինակ կաբուկի և թեյախմության արարողություն, և ժամանակակից մշակույթ, այդ թվում՝ վիդեո խաղեր և անիմե:

YUTA



SAKURA
さくら

Կավայ

Կարող ենք ասել, որ *«կավայ»* (ինչ լավիկն է) արտահայտությունը ամփոփում է ճապոնական փոփ մշակույթը: Երիտասարդներն ամբողջ աշխարհից հետևում են ճապոնական *«կավայ»* նորաձևությանը:

Անիմե

Չկա ավելի հետաքրքիր և զվարճալի բան, քան անիմեն: Գիտեի՞ք, որ կինոթատրոններում և հեռուստացույցով ձեր տեսած անիմեների մեծ մասի պատմությունները վերցված են ճապոնական մանգա կոմիքսներից և խաղերից:

Խաղեր

Զվարճալի վիդեոխաղերը, որ դուք խաղում եք միայնակ, ձեր ընկերների և ընտանիքի անդամների հետ, հաճախ արտադրված են Ճապոնիայում: Նոր տարբերակների թողարկումը մեծ իրադարձություն է ամբողջ աշխարհի գեյմերների համար:

Խորհրդանշական ապրանքներ

Ճապոնացի երեխաները և մեծերը անիմեի և մանգայի այս գեղեցիկ կենդանիների և հերոսների մեծ սիրահարներ են: Դուք կարող եք դրանց տեսնել ամենուրեք՝ սպորտային վերնաշապիկներից մինչև կոնֆետների ժապավեններ:



Կարաոկե

Եթե ունեք կարաոկե նվագարկիչ ուղեկցող երաժշտությունն ապահովելու համար, ապա դուք կարող եք դառնալ փոփ աստղ և երգել ձեր ընկերների և ընտանիքի հետ միասին:

Քոսփլեյ

Քոսփլեյ = զգեստ + խաղ: Անիմեի սիրահարները պատրաստում են այս զարմանալի զգեստները հատուկ առիթների և հավաքույթների ժամանակ իրենց սիրելի հերոսներին նմանվելու համար:

Նո

Նոն ճապոնական թատրոնի հնագույն տեսակներից է: Պատմությունները պատմում են գույնզգույն զգեստներ հագած և դիմակներ կրող դերասանները՝ վանկարկումների և երաժշտության ուղեկցությամբ:

Լաքապատում

Ճապոնական լաքապատումն այնքան հայտնի էր, որ հին անգլերենում լաքը կոչել էին պարզապես «Ճապոնիա»: Լաքապատ սեղանի սպասքը հաճախ է օգտագործվում տանը, բայց լաքը նաև օգտագործում են արվեստի գեղեցիկ և արժեքավոր նմուշներ ստեղծելու համար:

Փայտե շինություններ

Ճապոնական շենքերն ավանդաբար կառուցվել են փայտով՝ կիրառելով ատաղձագործության յուրօրինակ մեթոդներ: Մեր հին կառույցներն այսօր խնամքով պահպանվում են, իսկ ճապոնական տաճարներից մեկը աշխարհում գոյություն ունեցող ամենահին փայտե շինությունն է:

Իկեբանա (Ծաղկի արվեստ)

Ավելի քան 400 տարվա պատմություն ունեցող *իկեբանայի* արվեստը մեզ մինչև օրս կարևոր դասեր է սովորեցնում բնության, կյանքի և գեղեցկության մասին, քանի որ մենք սովորում ենք սեզոնային ծաղիկները հարդարել իրենց փիլիսոփայական գաղափարներին համապատասխան:

Սումո

Ճապոնացիները սիրում են ամեն տեսակ մարզաձևեր, բայց հին ավանդական սումո մարզաձևը հատուկ տեղ ունի նրանց սրտերում: Հայտնի ըմբիշները ունեն բազմաթիվ մոլի երկրպագուներ:

Ուկիյոէ (փայտի վրա տպագրություն)

Ճապոնացի արհեստավորները փայտի վրա տպագրության այս յուրահատուկ մեթոդը մշակել են 18-րդ դարում: Երբ Արևմուտքի նկարիչները հայտնաբերեցին *ուկիյոէն*, այն մեծ ազդեցություն ունեցավ 19-րդ դարի ֆրանսիական իմպրեսիոնիզմի վրա:

Սպորտ

Ճապոնիայում մենք զբաղվում ենք բոլոր տեսակի մարզաձևերով: Ես սիրում եմ ֆուտբոլ, իսկ քույրս սովորում է չմուշկներով սահել: Պապիկիս հոբբին բուդոն է՝ Ճապոնիայի ավանդական մարտարվեստները:

Սումո

Սումոն ըմբշամարտի տեսակ է, որն ավելի քան 1000 տարվա պատմություն ունի: Ըմբիշները հագնում են միայն կտորե մեծ գոտիներ, իսկ մազերը հարդարում են ինչպես հին ժամանակներում:

Ձյուդո

Ձյուդոն այժմ օլիմպիական մարզաձև է և ամենաճանաչված ճապոնական մարտարվեստը: Ինչպես բոլոր ավանդական մարտարվեստները, ձյուդոն ձեզ սովորեցնում է հարգել ուրիշներին և մարզում է հոգին:

Սքեյթբորդինգ


Ձկնորսություն

Բեյսբոլ

Գեղասահք

Սերֆինգ

Վոլեյբոլ

Ֆուտբոլ

Գոլֆ

Մարաթոն

Կյուդո

Կյուդոն նետաձգության հին տեսակ է, որում օգտագործվում են յուրահատուկ ավանդական աղեղներ: Այն զարգացնում է կենտրոնացում և կամքի ուժ: Կան նաև մրցումներ, որտեղ նետաձիգները փորձում են թիրախներ խոցել ձիավարելիս:

Կենդո

Կենդոն սկիզբ է առել իբրև սամուրայների ուսուցման համակարգ սուսերամարտի տեխնիկան գործնականում կիրառելու համար: Դուք օգտագործում եք հնդկեղեգից պատրաստված հատուկ թրեր և կրում պաշտպանական հագուստ:

Կարատե

Կարատեի արմատները սկիզբ են առնում հին Օկինավայում՝ Ճապոնիայի ամենահարավային նահանգում: Կարատեկաները մարզում են իրենց ձեռքերի և ոտքերի հարվածները իրար հաջորդող շարժումների՝ *կապաների* միջոցով:

SAKURA

Պատմություն

Ճապոնիայի պատմությունը կարելի է բաժանել վեց հիմնական շրջանի՝ յուրաքանչյուրը շատ տարբեր մշակույթով:

TOKYO METROPOLITAN ARCHAEOLOGICAL CENTER

Ամենավաղ ժամանակներում ճապոնական կղզեխմբի բնակիչները զբաղվում էին որսորդությամբ: Ավելի ուշ նրանք մշակեցին բրինձ աճեցնելու մեթոդներ և սկսեցին ապրել կայուն բնակավայրերում: Այս բնակավայրերի խմբերը կազմեցին բազմաթիվ մանր պետություններ: Դրանք բոլորն ի վերջո միավորվել են՝ դառնալով մեկ երկիր:

Որսորդությունից մինչև բրնձի աճեցում

մինչև 6-րդ դարի վերջ

ՎԱԿԱՅԱՄԱ ՆԱՀԱՆԳԻ ԹԱՆԳԱՐՄԵ

12-րդ դարից սկսած ֆեոդալական Ճապոնիան կառավարում էին մի շարք զորավարներ՝ սյոգուններ: 15-րդ դարի վերջում զինվորական կլանները միմյանց դեմ սկսեցին պայքարել տարածքների համար, և երկիրը մտավ կռիվների և խռովությունների երկարատև շրջան:

Սամուրայների վերելքը – Պատերազմող նահանգների շրջանը

13-րդ դարից մինչև 16-րդ դարի վեր

Կենտրոնածիգ պետություն – ազնվական մշակույթ

7-րդ դարից մինչև 12-րդ դարի վերջ

Պաշտոնապես ձևավորվեց կայսերակենտրոն կառավարման համակարգ: Նոր մայրաքաղաք Կիոտոն վերաճեց խոշոր քաղաքի, որտեղ արքունիքում ծաղկում էր ազնվական մշակույթը:

Եվրոպայի և ԱՄՆ-ի ճնշման տակ Ճապոնիան ավարտեց իր մեկուսացումը և վերսկսեց առևտուրն աշխարհի հետ: Սյոգունների իշխանությանը վերջ դրվեց: Ճապոնիան ներմուծեց արևմտյան գաղափարներ և մշակույթ և կառուցեց ժամանակակից պետություն: Այս շրջանն ավարտվեց երկու աշխարհամարտերով:



ՅՈԿՈՀԱՄԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹՐԻԹԻՎ

Մեկուսացման ավարտը Ճապոնիան դառնում է ժամանակակից երկիր

19-րդ դարի երկրորդ կեսից 20-րդ դարի առաջին կես

Խաղաղություն – առևտրական խավի բարգավաճում

17-րդ դարից մինչև 19-րդ դարի առաջին կես

Պատերազմի ավարտից մինչև այսօր

20-րդ դարի երկրորդ կեսից

Երկրորդ աշխարհամարտից հետո Ճապոնիան ընդունեց նոր՝ ժողովրդավարական սահմանադրություն: Խթանելով և զարգացնելով գլխավոր ճյուղերը՝ Ճապոնիան գրանցեց նշանակալից տնտեսական աճ՝ դառնալով միջազգային զարգացման աջակցության սեփական ծրագիրն ունեցող հարուստ պետություն:

Երբ վերջապես խաղաղություն տիրեց, սյոգունը կառավարությունը տեղափոխեց Էդո (Տոկիոյի հին անվանումը), և գրեթե 300 տարի կայունություն հաջորդեց՝ առևտրականներին և քաղաքների բնակիչներին բարգավաճում բերելով: Այդ տարիներին Ճապոնիան վարում էր աշխարհից մեկուսացման քաղաքականություն:

Կառավարություն

Ճապոնիայի սահմանադրությունը հիմնված է իշխանությունների տարանջատման սկզբունքի վրա: Կառավարման երեք անկախ մարմինները՝ օրենսդիր, դատական և գործադիր, հավասարակշռում են միմյանց, ապահովում մարդու իրավունքների և ազատությունների պահպանումը և կանխում պետական իշխանության չարաշահումը:

Միջազգային հարաբերություններ

Ճապոնիան ակտիվ դերակատարություն ունի ՄԱԿ-ում՝ ձգտելով միջազգային ասպարեզում ապահովել խաղաղություն և կայունություն: Բացի առանձին երկրների հետ երկկողմ հարաբերություններից՝ Ճապոնիան նպաստում է գլոբալ խնդիրների կարգավորմանը՝ որպես Մեծ Ութնյակի և Մեծ Քսանյակի անդամ և տարածաշրջանային համագործակցության շրջանակներում:

Շրջակա միջավայր և կլիմայի փոփոխություն

Ճապոնիան մեծ դեր է խաղացել աշխարհի երկրներին գլոբալ տաքացում առաջացնող ջերմոցային գազերի կրճատման անհրաժեշտության մեջ համոզելու գործում: 1997թ. ընդունված Կիոտոյի արձանագրությունը մեծ քայլ էր այդ ուղղությամբ:

Միջազգային համագործակցություն հանուն խաղաղության և ահաբեկչության դեմ պայքար

Ճապոնիան մասնակցում է միջազգային խաղաղարարությանը և հակամարտությունների կարգավորմանը՝ ՄԱԿ-ի խաղաղապահ առաքելություններին անձնակազմ և ապրանքներ հատկացնելով: Ճապոնիան նաև համագործակցում է այլ երկրների հետ ահաբեկչության դեմ պայքարում:

ՊԶԱ and Արտակարգ օգնություն

Զարգացող երկրներին Ճապոնիայի օգնությունը լավագույնս համապատասխանեցված է նրանց պայմաններին և ընդգրկում է վարկեր, դրամաշնորհներ և տեխնոլոգիաների փոխանցում: Բնական աղետների հաղթահարման իր սեփական փորձը շատ օգտակար է այլ երկրներին արտակարգ օգնություն ցուցաբերելիս:

Մշակութային փոխանակում

Մշակութային և փոխանակման այլ ծրագրերը աշխարհին ներկայացնում են ճապոնական հասարակությունն ու մշակույթը՝ խթանելով փոխըմբռնում և այլ երկրների հետ բարեկամական հարաբերությունների կառուցում:



Օրենսդիր

Ազգային դիետ

Ազգային դիետի անդամները քննարկում և անցկացնում են երկրի օրենքները: Դիետն ունի երկու պալատ՝ Ներկայացուցիչների և Խորհրդականների: Բոլոր անդամներն ընդունվում են ժողովրդի կողմից համապետական ընտրություններում:

Ընտրություններ

Գործադիր

Կաբինետ

Կաբինետն իշխանության մարմին է, որն ի կատար է ածում Ազգային դիետի որոշումները: Այն կազմված է վարչապետից և տարբեր գերատեսչություններ ղեկավարող նախարարներից:

Հանրային կարծիք

Դատական

Պետական ստուգում



Դատարաններ

Դատարանների առաքելությունը քաղաքացիների իրավունքները պաշտպանելն ու հասարակությունում խաղաղություն ապահովելն է: Նրանք վեճերը լուծում են օրենքների և սահմանադրության համաձայն և որոշում մեղավորությունը կամ անմեղությունը քրեական գործերում:

SAKURA YUTA

Տնտեսություն, արդյունաբերություն և տեխնոլոգիաներ

Ճապոնիան աշխարհի ամենազարգացած արդյունաբերական երկրներից է: Այս էջում մենք ձեզ ցույց կտանք բազմատեսակ տեխնոլոգիաներից որոշները, որոնք Ճապոնիան պահում են բարձունքի վրա:

Ճապոնիայի տնտեսական ներուժը

Ճապոնիան ունի հզոր մշակող արդյունաբերություն, բայց սակավ բնական ռեսուրսներ: Ուստի, մենք ներկրում ենք բնական հումք և արտահանում պատրաստի ապրանքներ: Արդյունաբերության գլխավոր ճյուղերն են ավտոմոբիլաշինությունը, ճշգրիտ մեքենաշինությունը, համակարգիչներն ու կենցաղային տեխնիկան: Ճապոնիայի տնտեսության շարժիչ ուժը նորարությունն է և տեխնիկական հնարավորությունները:

©RIKEN

Գերհամակարգիչ

Ճապոնական «Կեյ» գերհամակարգիչը աշխարհում հզորագույններից է, որն ունակ է վայրկյանում 10 կվադրիլիոն (10^{16}) հաշվարկ կատարել («կեյ» ճապոներեն նշանակում է 10^{16}): Այն հիմնականում օգտագործվում է էներգետիկ և կլիմայական հաշվարկներ կատարելու, բժշկական հետազոտություններ և աղետների կանխատեսում իրականացնելու համար:

Շինկանսեն (գերարագ գնացքներ)

Շինկանսեն գծերի վրա գնացքներն ընթանում են ավելի քան 200 կմ/ժ արագությամբ: Ամենաարագը Հայաբուսա գնացքն է, որը զարգացնում է 320 կմ/ժ արագություն Տոհոկու շրջանով անցնելիս: Չնայած իրենց արագությանը՝ այս գնացքները շատ ապահով են, ճշտապահ և հարմարավետ:

©Fuji Heavy Industries Ltd.

Ապահով մեքենաներ

Ճապոնական մեքենաները աշխարհում հայտնի են իրենց ապահովությամբ և էլ ավելի ապահով կդառնան, քանի որ մշակվում է վարորդի կյանքի փրկությանն աջակցող նոր տեխնոլոգիական համակարգ, որը կարող է վերահսկել մեքենայի շարժիչը և արգելակել՝ խուսափելու պատահարներից և նվազեցնելու մասը:

© RIKEN-TRI Collaboration Center for Human-Interactive Robot Research

Ռոբոտ բուժքույրեր

Ճապոնիան առաջինն է սկսել նախագծել մարդկանց պես շարժվող ռոբոտներ: Նմանօրինակ ռոբոտների մեծ պահանջարկ կա գործարաններում և շինհրապարակներում: Հույս կա, որ մարդանման ռոբոտ բուժքույրերը ի վերջո կստանձնեն ծեր մարդկանց խնամքի համար պահանջվող ֆիզիկական ծանր աշխատանքի մեծ մասը:

Կոմպակտ թվային տեսախցիկներ

Ճապոնական թվային տեսախցիկները շարունակում են էլ ավելի փոքր ու թեթև դառնալ: Բայց միաժամանակ, տեխնոլոգիական նվաճումները դրանք դարձնում են ավելի խելացի և հեշտ օգտագործելի: Կարիք չկա, որ դուք լուսանկարչական գիտելիքներ ունենաք հիանալի լուսանկարելու համար:

Գյուղատնտեսություն և ձկնորսություն

Ճապոնիայի հիմնական մշակաբույսը բրինձն է, սակայն շատ են նաև բանջարեղենի, մրգի, տավարի մսի և կաթնամթերքի ֆերմերները: Ճապոնական ձկնորսական նավերը որսում են բոլոր տեսակի ձկներ: Բայց քանի որ Ճապոնիան ունի իր չափերի համեմատ այդքան մեծ բնակչություն, պարենի մեծ մասը պետք է ներկրվի:

Արժույթ

Ճապոնական արժույթը կոչվում է իեն: Իենը խոշոր արժույթներից է, որը մեծ ազդեցություն ունի համաշխարհային տնտեսության վրա: Կան 1,000, 2,000, 5,000 և 10,000 իեն թղթադրամներ, և 1, 5, 10, 50, 100 և 500 իեն մետաղադրամներ: Եվ մետաղադրամները, և թղթադրամները շատ բարդ կառուցվածք ունեն՝ դրանց հնարավոր կեղծումը դժվարացնելու համար:

Շրջակա միջավայրի պահպանություն

Մենք բոլորս ցանկանում ենք հոգալ շրջակա միջավայրի մասին, և մարդիկ շարունակաբար լավ գաղափարներ են առաջարկում դա անելու համար: Ռեսուրսները թանկ են, և մենք պետք է ամեն ինչ անենք դրանք չվատնելու համար:

Վերամշակում

Իրերն օգտագործելուց հետո դեն նետելու փոխարեն մենք կարող ենք վերամշակել դրանք՝ որպես նոր ապրանքների համար հումք: Խմիչքների շշերը, թերթերը և հին հագուստը վերամշակելու համար ամենահարմար իրերից են:

Կրճատում

Մեր կողմից ստեղծվող և դեն նետվող տնային աղբի ծավալը կրճատելու շատ ուղիներ կան: Որպես սկիզբ՝ գնումներ կատարելիս մենք կարող ենք մեզ հետ վերցնել մեր սեփական տոպրակները և խուսափել չափազանց շատ փաթեթավորում ունեցող նյութեր գնելուց:

Վերաօգտագործում

Վերաօգտագործման օրինակ է ձեր ախտահանող շշի պահպանումը և դատարկվելուց հետո այն պարզապես վերալցնելը: Եթե ինչ որ բան փչանում է, ինչու՞ չվերանորոգել այն: Եվ երբ ձեր հագուստը փոքրանում է, ինչ-որ տեղ ինչ-որ մեկը ուրախ կլինի վերցնել դրանք:

«Մոտտայնայ»

Սա ճապոներենում հին ավանդական արտահայտություն է, որը նշանակում է լավ հոգալ իրերի մասին և խուսափել վատնումից: Դա այնքան համահունչ է շրջակա միջավայրի պահպանության իդեալներին, որ այն իբրև համաշխարհային կարգախոս ընդունելու համար շարժում կա:

Կանաչապատում

Կանաչապատման նախագծերը լինում են բոլոր տեսակի և չափերի՝ լեռնային անտառների վերականգնման նպատակով ծառերի տնկումից մինչև ավելի շատ քաղաքային այգիների ստեղծում, փողոցներում ծառերի տնկում և նույնիսկ տանիքներում պարտեզների աճեցում:

Խելացի տներ

Ապագայի բնապահպանական այս տների նախագծումն առաջընթաց է գրանցում: Դրանք նախատեսված են ստանալու, պահպանելու և կառավարելու սեփական էներգիան:

Արևային էներգիա

Ճապոնացիները խանդավառությամբ են ընդունել արևային էներգիան որպես մաքուր էներգիայի իդեալական աղբյուր: Շատ տներ ունեն սեփական տանիքի վահանակներ, և կան ամբողջ քաղաքներ, որոնք արտադրում են իրենց սեփական համայնքային արևային էներգիան:

Արևային ավտոմեքենաներ

Ճապոնիան համաշխարհային առաջատար է սեփական արևային վահանակներով սնուցվող էլեկտրական ավտոմեքենաների հետազոտությունների և զարգացման բնագավառում: Երբ այս ավտոմեքենաները լայն կիրառություն ստանան, զգալիորեն կնպաստեն CO2 արտանետումների կրճատմանը:

«Քուլ Բիզ»

Կառավարության կողմից աջակցվող այս հանրաճանաչ արշավը գրասենյակային աշխատողներին խրախուսում է ամռանը կոստյումներն ու փողկապները թողնել տանը: Եթե բոլորն աշխատեն կարճաթև, ապա օդորակիչը կարելի է անջատել՝ խնայելով մեծ քանակությամբ էներգիա:

Թափոն

Թափոններից էներգիայի ստացում

Կենցաղային աղբը և թափոնները հավաքվում և այրվում են թափոնների վերամշակման գործարաններում: Անջատվող էներգիան արժեքավոր ռեսուրս է, և ժամանակակից գործարաններն այն վերաօգտագործում են օրինակ լողավազանները տաքացնելու համար:

Թափոնների վերամշակման գործարան

Տաքացվող լողավազան